

Թալան է նշանակում եւ դրուած է յուն . skulon բառի դէմ :

Բայց միեւնոյն յունարէն բառի դէմ Ս . Գիրքը դնում է նաեւ «կապուտ» բառը եւ միշտ ասում է «կողոպտել կապուտ» այնտեղ, ուր յոյնը skulon է գործ ածում եւ նրանից ածանցուած բայը : Այնպէս որ ուր հայը, եթէ բառացի թարգմանէր, պէտք է ասէր «կապտել կապուտ», ասում է «կողոպտել կապուտ» (Եզեկ . ԼԲ . 12, 13) : Մի ուրիշ տեղ (ԵԼք, ԼԲ . 2, 3) «կողոպտել» դրուած է յունարէն այնպիսի բառի դէմ, որ նշանակում է պոկ տալ, որտեղ : Ոսկի հորթ ձուլելու համար Ահարոնն ասում է հրէաներին . «Կողոպտեցէք զգլխոս ոսկիս յահանջաց կանանց ձերոց եւ ուստերաց եւ գլուստերաց ձերոց եւ բերէք առ իս» . «եւ կողոպտեաց ամենայն ժողովուրդն զգլխոս ոսկիս յահանջաց իւրեանց», այսինքն՝ «գլխոսները պոկ տուին իրենց ականջներին : Այսպէս ուրեմն Ե . դարում «կողոպտել» նշանակում էր պոկ տալ, թալանել, կամ ինչպէս մեր ժողովուրդն է ասում — միշտ հաւատարիմ իր լեզուական ասանդութեան — պոկել, պլոկել : «Պլոկել» նշանակում է թալանել : «Ճամբին պլոկեցին մարդուն», այսինքն՝ թալանեցին : Գլուխ նշանակող կողոպի հետքը չի մնացել Ե . դարում :

Մտխորաբար «կողոպտուտ» եւ «կապուտ» բառերն իրար հետեւ են գործ ածւում իբր «կապուտ-կողոպուտ» եւ երկուսն էլ թալան իմաստով : Մեր ժողովուրդն այս գաղափարներն արտայայտում է թալանել եւ պլոկել բառերով . բայց նա ունի եւ հին «կողոպուտ» բառը, սակայն յատուկ ատումով : «Կողոպուտ» նշանակում է մեռածի հաղուատը, որ շատ տեղեր տալիս են տէրտէրին . այդ նրա օրինական բաժինն է, ինչպէս մատաղ արած ոչխարի էրին (առջեւի աջ ոտը թիակով միասին) : Տեղ-տեղ կողոպուտը տալիս են ժամկոչին, մի քանի տեղ էլ, մանաւանդ քաղաքներում, մեռածի զիտակը լուացողին : Այդ իմաստով է յօրինուած դիակապուտ բառը, որ նշանակում է մեռելները պլոկող, թալանող : Ժողովուրդի այսօրուան «կողոպուտը» եւ հին «զիտակապուտ» բառի բազալըն «կապուտ»ը նորից մտնեցնում են այդ երկու գաղափարներն իրար, բայց այս անգամ

ոչ թէ պարզ թալանի իմաստով, այլ իբր զիտակի պլոկում : Եթէ ասեմ որ «կապուտ» բառը եւ կշուում եմ լատ . captus բառի հետ, որ ծագում է capto բառից (բռնել, ճանկել, չանթել, իւրացնել) եւ նշանակում է գերի, այն ժամանակ թող որ տարերքը պատրաստ կը լինին «կապուտ» եւ «կողոպուտ» բառերի բուն եւ հնագոյն իմաստը հատկանշու համար :

Կապուտ բառի արմատն է «կապ» : Իբր արմատ՝ նա բաղմանիչ է . նշանակում է ե՛լ կապ, ե՛ւ կապած : «Լեղուն կապ ա», այսինքն՝ կապ ընկած է, կապուած է լեզուն : Ձին կապ ա՞ թէ բաց . այսինքն ձին կապած է՞ թէ ոչ : Այս մտքով «կապուտ» նշանակում է մի խումբ կապածներ, այսինքն՝ գերիներ : Ուրեմն «կապուտ կողոպուտ»՝ նշանակում է գերիներ եւ գլուխներ : Թշնամիները գլուխները կտրել տանելը հին կենցաղի մի սովորութիւն էր : Արշաւանքի զնացողները բերում էին գերիներ, այսինքն՝ կապածներ եւ թշնամիների գլուխներ, այսինքն՝ «կապուտ» եւ «կողոպուտ» : Բարքերի մեղմացումով գերիները շատացան, իսկ սպանուածների գլուխների փոխարէն սկսան արտել նրանց գէնքը եւ հագուատը պլոկել, որով «կողոպուտ» սկսաւ նշանակել մեռած մարդու հագուատ : «Կապուտ»ի եւ «կողոպուտ»ի գաղափարները իբր նոյնամանակ գործողութեանց գաղափարներ՝ սերտօրէն կապուեցին իրար եւ խառնուեցին, ստլով «կապուտ կողոպուտ» բացատրութիւնը իբր ալան-թալան : Գրերի գիտը հանդիպում է մեր զոյգ բառերի իմաստարանական (semantique) զարգացման ա՛յդ աստիճանին : Ժողովուրդը սակայն պահած է «կողոպուտ»ի հին իմաստներից մէկը եւ անխճելիս զեռ ասում է . «Կողոպուտը տէրտէրը տանի» : Իսկ «կապուտ»ը մերկացնելու իմաստ է ստացել եւ նոյնացել բոնութեամբ պոկելու գաղափարի հետ, տարով մեր կապուել բայը, որ կապուտ-ել է եւ հիմա նշանակում է լուել, սեփականել անիրաւաբար :

Ահա թէ ի՞նչ կոմաններ (գիղգազ) է տալիս ժողովուրդի ստեղծագործ միտքը եւ թէ ինչ նոր-նոր իմաստներ է լցնում պատմութիւնը հին բառերի ամանների մէջ :